




Երեսնյա այսպիսի

ՄԱՅՐ ԱՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄԵԿՎՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿԵԱԲԱԹԱԹԵՐԹ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. Փարեգին Բ Ամենայն
Հայոց Կաթողիկոսի ուղերձը
Հաղթանակի եւ խաղաղության տոնի,
Շուշիի ազատագրության եւ Արցախի
դաշնայնության բանակի հիմնադրման
օրերի առթիվ**



*Միտնելի՛ հայրողիներ,
Մայիսի 9-ի նվիրական
այս օրը վերաբժանողում ենք
մեր ժողովրդի ներդրած անմ-
նացորդ ջանքերը, որոնք
նպաստեցին Երկրորդ հա-
մաշխարհային պատերազ-
մում ֆաշիզմի եւ բռնության
դեմ հաղթանակի կերտմանը
եւ աշխարհում խաղաղու-
թյան հաստատմանը: Ար-
ցախյան հերոսամարտում
Շուշիի ազատագրման եւ
Արցախի բանակի կազմա-
վորման խորհրդանշական
այս նույն օրը, սակայն, անդ-*

*րադառնում ենք նաեւ անցյալ տարի Ադրբեջանի սանձազերծած պատերազմի
ողբերգական հետեւանքներին: Ադրբեջանի կողմից շարունակվում են խաղաղ
բնակչության դեմ ոտնձգությունները, անմարդկային խոշտանգումների են են-
թարկվում գերության մեջ գտնվող մեր զինվորականներն ու քաղաքացիական
անձինք, հետեւողականորեն ոչնչացվում է հայկական հոգեւոր ու մշակութային
բազմադարյա ժառանգությունը Արցախում:*

*Միտնելի՛ ժողովուրդ, այսօր առկա նոր մարտահրավերներին հանդիման մեզ
համար հրամայական է հայոց բանակի գորացումը, որ երաշխավորն է մեր հայ-
րենիքի անվտանգության ու մեր խաղաղ կյանքի: Մայիսի 9-ը՝ իբրեւ Հաղթա-
նակի եւ խաղաղության տոն, մեզ համար միշտ լինելու է ոգեշնչման աղբյուր եւ
վկայություն, որ մեր հաղթանակներն ու ձեռքբերումները հնարավոր են կեր-
տել համազգային միասնականության անպարտ ուժով: Մենք պարտք ունենք
մեր նահատակների ու նոր սերնդի առջև՝ ի գին ամեն գոհողության շենացնե-
լու հայրենի մեր երկիրը եւ վերանորոգելու մեր կյանքի խաթարված ընթացքը,
ջանքեր ներդնելու հանուն արցախահայության խնդիրների հաղթահարման եւ
հետեւողականորեն պայքարելու հանուն ազգային մեր իղձերի ու նպատակնե-
րի իրականացման:*

*Աղոթում ենք նահատակված հայրողիների հոգիների հանգստության, գե-
րիների ու անհայտ կորածների վերադարձի, վիրավորների ապաքինման հա-
մար: Հայցում ենք, որ Բարձրյալ Տերն Իր օրհնության ներքո խաղաղության
ու ապահովության մեջ պահպանի մեր Հայրենիքը եւ գորացնի մեր ժողովրդին
ոգու արիությանը, հույսով ու հավատով, այսօր եւ միշտ. ամեն:*

Օրհնությամբ՝

ՓԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**Մայիսի 9-ը
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում**

Մայիսի 9-ին՝ Հաղթանակի ու խաղաղության տոնին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբա-
նությունը Պատարագի արարողությանը մասնակ-
ցեց Ս. Գայանե վանքում: Պատարագիչը Գեորգ-
յան հոգեւոր ճեմարանի տեսուչ Մեսրոպ վրդ.
Պարսամյանն էր:

Հայր սուրբը, իր քարոզում անդրադառնալով
օրվա խորհրդին, ի մասնավորի մշեց. «Այսօր մա-



յիսի 9-ն է՝ մեր հաղթանակների եռատոնը, երբ
հիշատակում ենք հաղթանակը Հայրենական մեծ

յիսի 9-ն է՝ մեր հաղթանակների եռատոնը, երբ
հիշատակում ենք հաղթանակը Հայրենական մեծ
պատերազմում, Շուշիի ազա-
տագրումը եւ Արցախի պաշտ-
պանության բանակի ստեղծ-
ման տարեդարձը: Այսօր,
սակայն, երբ Երկրորդ համաշ-
խարհային պատերազմը հե-
ռավոր մի իրականություն է նոր
սերնդի համար, երբ Շուշին
գտնվում է թշնամու վերահս-
կողության տակ, իսկ Արցախի
պաշտպանության բանակի
հետագա ծակատագիրը մշու-
շոտ է, թվում է, անհնար է խո-
սել հաղթանակների մասին:
Սակայն հենց այս մռայլ օրերին
է, որ ավելիով կարիքն ունենք
լսելու հաղթանակի պատգամը
եւ հիշատակելու հաղթանակի
այն ոգին, որը գրավակամն է
մեր բոլոր հաղթանակների»:

Հայր սուրբը հավելեց, որ այս օրերին սրտա-
բուխ աղոթքով հիշատակում ենք նաեւ բոլոր
մրանց, ովքեր անցած դարերում հավատով եւ
հաղթանակի սպասումով նահատակվեցին հա-
նուն ազատ կյանքի, հանուն իրենց քրիստոնեա-
կան հավատի եւ սրբազան հայրենիքի: Ապա
աղոթք վերառաքելով առ Աստված՝ հայր սուրբը
հայցեց Տիրոջից, որ երկնքի արքայության լույ-
սերի մեջ բնակեցնի մեր բոլոր նահատակների
հոգիները, եւ վերջում մաղթեց, որ ամենակարող
Աստված պահի ու պահպանի մեր նվիրական
հայրենիքը եւ իմաստությունն ու խորագիտու-
թյունն պարգևի ամենքիս, որ կարողանանք ազգո-
վին համախումբ կերտել մեր հաղթական գալիքը՝
ի փառս Ամենասուրբ Երրորդության, ի պայծա-
ռություն մեր հայրենիքի եւ մեր Առաքելական
Մայր Եկեղեցու:

Սուրբ Պատարագի ավարտին, նախագահու-
թյամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի լուսարարապետ
Մուշեղ եպս Բաբայանի, կատարվեց հոգեհանգս-
տյան արարողություն՝ Հայրենական մեծ պատե-
րազմի եւ Արցախյան հերոսամարտի ընթացքում
զոհված քաջորդիների հոգիների հանգստության
եւ խաղաղության համար:

Նույն օրը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբա-
ներն այցելեցին «Հաղթանակ» զբոսայգի, որտեղ
Ամհայտ զինվորի հուշարձանին ծաղկեպսակներ
գետեղելուց հետո իրենց հարգանքի տուրքը մա-
տուցեցին Հայրենական մեծ պատերազմում եւ
Արցախյան հերոսամարտում զոհվածների ան-
մար հիշատակին:



Հայտարարություն

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ցավով ար-
ձանագրում է, որ Արցախյան երկրորդ
պատերազմի ընթացքում եւ հետպատե-
րազմյան շրջանում չեն դադարել հայոց
հոգեւոր եւ մշակութային ժառանգության
համդեպ Ադրբեջանի կողմից իրականաց-
վող բարբարոսական գործողությունները:

Այսօր, հարաբերական խաղաղության
պայմաններում, շարունակվում են թիրա-
խավորվել հայոց սրբավայրերը՝ նպատակ
հետապնդելով վերացնել Արցախի պատմա-
կան մեր հողի վրա հայկական ինքնության

հետքերն ու վկայությունները: Ադրբեջանի
վերահսկողության տակ անցած տարածքնե-
րում արդեն իսկ ոչնչացվել են սրբավայրեր,
պղծվել վանքեր ու եկեղեցիներ եւ վերացվել
դրանց պատմական պատկանելիությունը
հավաստող արձանագրությունները, անարգ-
վել խաչքարեր եւ նախնյաց շիրիմներ: Պատ-
մության խեղաթյուրման եւ կեղծման ճանա-
պարհով փորձեր են կատարվում յուրացնելու
այդ տարածքներում առկա շուրջ 150 հայ-
կական սրբատեղիներ եւ աշխարհին ներկա-
յացնելու իբրեւ ուղիների կրոնական ժառան-

գություն: Օրեր առաջ հայտնի դարձավ նաեւ
վերանորոգության պատճառաբանությամբ
Արցախի թեմի առաջնորդանիստի՝ Շուշիի
Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ տաճարի
հոգեւոր խորհրդանիշները վերացնելու եւ
գմբեթի վեղարը վայր բերելու փաստը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը դատա-
պարտում է Ադրբեջանի իշխանությունների
կողմից իրականացվող մշակութային եղեռ-
նագործությունը, ինչն անսրբող արտահայ-
տություն է հայատյացության, անհանդուր-
ժողականության եւ թշնամանքի:

Հակառակ հինգդ հայտարարությունների
եւ արդարացումների՝ որդեգրված այս քա-
ղաքականությունը չի կարող որեւէ կերպ
նպաստել տարածաշրջանում կայունու-
թյան եւ տեւական խաղաղության վերա-
հաստատմանը:

Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկե-
ղեցին պիտի շարունակի այս խնդիրները
բարձրաձայնել միջազգային հանրության
եւ պատկան կառույցների առջև՝ կասեցնե-
լու հայ ժողովրդի իրավունքները ոտնահա-
րող բարբարոս այս երեւոյթները:

1918 թ. մայիսյան հերոսամարտեր.

հայ ժողովրդի Հայրենական մեծ ռաքերազմը եւ միասնական ոգու հրաւակերս հաղթանակը



ՍԱՐԴԱՐԱՊՈՍԻ ԶԱՆԳԵՐԸ

Ողբերգության պես ու սուրբ հավատի շանգերն են հնչում Սարդարապատի: Ասես մարդկային արցունքները ջինջ հտացել այստեղ, դարձել են պղինձ: Խտացել այստեղ, փոխվել են երգի ժամանակի մեջ ու տիեզերքի: Ողբերգության պես ու սուրբ հավատի շանգերն են հնչում Սարդարապատի: Արարատ լեռան հայացքի տակ ծեր Բիրտ յաթաղանն էր վայրի շառաչում... Բայց բարբարոսը, ոչ, չէր հասկացել, Որ վերքերից են վարդերը աճում. Մի բուռ հայ մնաց եւ ահեղ մի ցավ, Մի բուռ հայ մնաց եւ ոխ մի շաչում... Բայց մարդասպանը, ոչ, չհասկացավ, Որ վերքերից են վարդերը աճում: Եվ արնոտ հողում Սարդարապատի Բռնկվեց կռվի վարդը սրբազան... Եւ դահիճներն այն մենզ ու տմարդի շարմանքով հանկարծ այր վարդը տեսան... Տեսան վարդն ահեղ ու սարսափելի, Որ արցունքից ու բոցից էր աճում... Եվ նա, ով մահն էր բերում հայերի, Ինքը գալարվեց մահվան սեւ ճահճում: Ազգասպանության ահավոր հնձից Փրկվեց արմաքամ մի բուռ հայություն: Արարատ լեռան զորավոր շնչից Նա ոգի առավ, առավ հարություն: Ես անիծում եմ եղեռն ու նախճիր, Ես անիծում եմ զորքերը մահվան: Փառաքանում եմ այս վարդերը հիր Եվ այս զանգերը վերածնության... Չանգերն են զնգում Սարդարապատի... Պղնձե զանգը Նման է վարդի...

Սեւ գործերի դեմ՝
Լուսավոր զանգեր...
Հանգեր են ասես,
Երգի,
Հավատի,
Հարության հանգեր...
Սարդարապատում
Հնչում են զանգեր...

ԷՐՈՒՐՈՐԱՍ ՄԵԾԵԼԱՅՏԻՍ
Թարգմանությունը՝ Վահագն Դավթյանի

1918 թվական, մայիս... դժնդակ, օրհասական, չարագույժ օրեր, հայ ժողովրդի մղած անօրինակ մաքառումների, հայ ժողովրդի Հայրենական մեծ պատերազմի օրեր, որոնք դարձան հայոց միասնական ոգու փայլատակման օրեր, ու այդ միասնականության երկունքով լույս աշխարհ

եկան մեր անկողնում կամքի եւ հավիտենականության մարմնացումը՝ Հաղթանակը, եւ մեր դարավոր իղձն ու բաղձանքը՝ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը:

Չուլումի, մահտարածամի օրեր էին: Արմաճարավ ու հայաճարակ գազանը՝ բազմագլուխ վիշապ-հիդրայի կերպարանք առած թուրքական զորքը, զավթել էր Ալեքսանդրապոլը (այժմ՝ Գյումրի) եւ օղակ-օղակ գալարվելով՝ շարժվում էր դեպի Արարատյան երկրի սիրտը: Իսկ որտեղ թուրքական բանակ ու թուրք խաժամուժ, այնտեղ ավերում, մահ ու կոտորած, այնտեղ արյան ծով ու արցունքի հեղեղ, ողբ ու սուգ, կական ու արյուն, արյուն, երկինք ու երկիր բոսորով պատված...

Կարսի գրավումից հետո ստեղծված թուրքական «Կարս» բանակային խմբավորումը՝ Յաղուբ Շեքի փաշայի գլխավորությամբ, նպատակ ուներ նվաճել ամբողջ Արեւելյան Հայաստանը, դուրս գալ Բաքու, ապա Դաղստան ու անդրկասպյան երկրամասեր եւ իրականացնել Մեծ Թուրան ստեղծելու առաջին քայլը: Ալեքսանդրապոլը գրավելուց հետո թուրքական զորքերի հրամանատարությունը կատարեց զորքերի վերադասավորում՝ ստեղծելով չորս զորախումբ:

Թուրքական առաջին զորախումբը (Կովկասյան 5-րդ հետեակային դիվիզիան եւ երկրորդ զորակազմի առաջին զորախումբը), հարձակվում սկսելով Վորոնցովկայի (այժմ՝ Տաշիր) ուղղությամբ, մարտական առաջադրանք ուներ Քարախաչի լեռնանցքով հասնելու Բոլնիս-Խաչեն, Բորչալու եւ, միանալով Ղազախից Թիֆլիս շարժվող զորքերին, գրավելու Թիֆլիսը, ապա եւ Բաքուն:

Թուրքական երկրորդ զորախումբը հրաման ուներ հարձակվելու Զաջուռ-Համանլու (այժմ՝ Սպիտակ) — Ղարաբախի (այժմ՝ Վանաձոր) — Դիլիջան — Ղազախ — Ելիզավետպոլ (Գանձակ, այժմ՝ Գյանջա) ուղղությամբ: Եթե ձախ թեւից հարձակվող թուրքական զորախումբը հասած լինեւր Շուլավեր, ապա Ելիզավետպոլ արշավող թուրքական զորքերը պետք է Ղազախից օժանդակող ուժեր տրամադրեին դեպի Թիֆլիս, այնուհետեւ Բաքու շարժվող թուրքական զորքերին: Առաջին երկու ուղղությունները թուրքերի հիմնական նպատակն էին, քանի որ նրանք ուզում էին արագորեն վերահսկողություն սահմանել Ղազախ—Աղստաֆա—Ելիզավետպոլ երկաթուղու վրա՝ դեպի Բաքու արշավելու համար: ➔ էջ 4

Համբարձման տոնը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում

Մայիսի 13-ին Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին տոնախմբեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնը: Այս տոնին հիշատակվում է նաեւ 1441 թվականին Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սսից Էջմիածին փոխադրելու պատմական օրը:

Տերունական տոնի կապակցությամբ Մայր Աթոռի միաբանությունը Պատարագին մասնակցեց Ս. Գայանե վանքում: Պատարագիչն էր Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Սերովբե եպս Խախանյանը:

Իր քարոզում սրբազան հայրն անդրադարձավ Տեր Հիսուս Քրիստոսի Համբարձման տոնի խորհրդին՝ ի մասնավորի նշելով. «Այսօր Հայ Եկեղեցին տոնախմբում է Տիրոջ Համբարձման տոնը, Նրա վերադարձը դեպի Իր երկնավոր Հայրը: Այսինքն՝ այն Հիսուսը, որ Իր խորհախորհուրդ ծննդյամբ երկինքը բերել էր երկիր, այժմ Իր հրաշալի համբարձմամբ երկիրը բարձրացնում է դեպի երկինք: Հիսուս վերադառնում է այնտեղ, որտեղից ծնունդ էր առել, այսինքն՝ դեպի Աստված: Աստծո Որդին որպես մարդ եկավ դեպի մեզ, որպեսզի մարդկորեն մոտ լինի մեզ: ...Որքան էլ Հիսուս այսօր մեզ մեր երկրային մարմնավոր աչքերով տեսնելի չէ, մենք չենք կարող Նրան շոշափել, Նա մարմնավոր իմաստով չի քայլում մեզ հետ ու մեր կողքին, այնուհանդերձ Նա այնտեղ է, ուր մենք ենք՝ Նրա հետեւողներս, Նա մեզ հետ է մինչեւ «ի կատարած աշխարհի»»:



Սերովբե եպիսկոպոսը հաստատեց, որ հավատացյալները Հիսուս Քրիստոսին համդիպում են նաեւ սուրբ Պատարագի միջոցով, սուրբ Հաղորդության ճաշակմամբ, եւ եկեղեցին մեզ համար այն վերնատունն է, ուր մենք հավաքվում ենք հանդիպելու Տիրոջ ու Փրկչին, քանզի եկեղեցուն Տիրոջ խորհախորհուրդ ներկայությամբ երկինքն ու երկիրը հանդիպում են իրար:

«Երկինքն» այնտեղ է, ուր Աստված է ապրում: Աստված ապրում է այնտեղ, ուր տիրում են սեր ու խաղաղություն, ուր կատարվում է Աստծո կամքը, ուր Աստծո շունչն է փչում»,- ընդգծեց սրբազան հայրը:

Պատարագիչ սրբազանը հիշեցրեց ներկա հավատավոր ժողովրդին, որ այսօր նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսության Աթոռը Սիս քաղաքից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին փոխադրելու պատմական հիշատակությունն է՝ փաստելով, թե ճիշտ էին արեւելյան վարդապետները, երբ որոշում կայացրեցին Հայ Եկեղեցու հոգեւոր կենտրոնը, Հայոց Կաթողիկոսության նստավայրը վերադարձնել դեպի իր աստվածօրհնյալ բնօրրանը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

«Սուրբ Էջմիածինն Աստծու կողմից մեզ ընծայված այն մտւրն է, այն սրբազնասուրբ վայրն է, ուր մենք միասին ենք հավաքվում՝ փնտրելու Հիսուս Քրիստոսին, լսելու Նրա աստվածային ձայնը եւ հետեւելու Նրան: Եվ երբ ես ասում եմ Սուրբ Էջմիածին, ես հասկանում եմ ոչ միայն հավերժական Արարատի փեշերին վեր խոյացող Ս. Էջմիածնի

Մայր տաճարը, ուր իջավ Աստծու Միածին Որդին՝ Հիսուս Քրիստոս, այլ աշխարհափյուռ ողջ Հայ Եկեղեցին, որի սրբազան խորաններում Հիսուս է իջնում երկնքից ի վար՝ տեսքով նշխարի ու կարմիր գինու՝ որպես կենսաբեր Սարմին ու Արյուն: Եվ մենք բոլորս կոչված ենք Ս. Էջմիածինը՝ Տիրոջ հավերժական նվերը մեր ազգին, դարձնելու մեր հոգեւոր հայրենիքը, որը բանաստեղծի բառերով ասած՝ ծննդավայրն է մեր հոգու եւ «դեպի երկինք բարձրացող գաղտնի ճամփայ մը ունի»,- ասաց Սերովբե եպիսկոպոսը՝ հաստատելով, որ ամեն օր Ս. Էջմիածինը կանչում է մեզ նաեւ այս Պատարագի միջոցով՝ փնտրելու, գտնելու այդ ճամբան եւ այդ ճանապարհին լսելու Տիրոջ կանչող ձայնը, ընդունելու, որ «Նա է Տերը», եւ հետեւելու Նրան»:

Հավարտ Պատարագի, հանդիսապետությամբ Մայր Աթոռի լուսարարապետ Մուշեղ եպս Բաբայանի, կատարվեց Հայրապետական մաղթանք, որի ընթացքում հոգեւոր դասն ու հավատացյալ ժողովուրդն աղոթք բարձրացրեցին առ Աստված՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու Ամենայն Հայոց Հայրապետության անսասանության եւ հավերժ պայծառության համար:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Մուշեղ Գալշոյան

Սկիզբը՝ թիվ 3—8

Անցյալի հիշողությունների եւ ներկա կյանքի միջոցով հեղինակն ստեղծում է XX դարի հայ մարդու համահավաք նկարագիր՝ եղեռն ու ավերածությունից մինչեւ նորաշեն տուն ու ավան:

Վեպում կա մեկ այլ կերպար եւս, որն ամեն առիթով ոգեկոչում է իր անցյալը եւ այդ երանելի օրերի մասին հպարտորեն պատմում շրջապատի մարդկանց: Դա պառավ Ջանանն է: Նա հիմա միայնակ է, ծերությունից աստիճանաբար մտավոր խանգարումներ է ստանում, եւ միակ մխիթարանքը մնում է անցյալի վերհուշը: Մարդկանց ծանոթացնելու աստիճանի ամուն առ ամուն նա պատմում է այն մեծ գերդաստանի մասին, որտեղ ինքը ժամանակին հարս է գնացել: Այն պահը, երբ Ջանանը լուռ ու մունջ հետեւում է ջրամբարի մակարդակի բարձրացմանը, ջրամբարի տակ գտնվող գյուղերի վերացմանը, ջրով ծածկվող տներին՝ ամխոս զուգահեռով զգալ է տալիս նաեւ բուն ծննդավայրի կորուստը, որը ջրով չծածկվեց, այլ կործանվեց, ամայացավ, լցվեց թշնամու լամուկներով եւ այդպես կորավ ու գնաց երկրի երեսից:

Սանթրոն ու Ջանանը լրացնում են իրար եւ ամբողջացնում պատմական հայրենիքի սիրո ամանց կարոտը:

Արման հարուստ բնավորություն է, վիպական հյուսվածքի մեջ նրան զգալի տեղ է հատկացված: Սկզբունքային, ազնիվ այդ երիտասարդը, բարձրագույն կրթություն ստանալուց հետո, ցանկանում է պիտանի լինել տնտեսությանը: Սակայն մի անազնիվ արարք վրդովում է նրան (այս դեպքի հետ

կապված՝ շատ լավ է ներկայացված նրա գիմարբուքի տեսարանը), եւ նա մտածում է հրաժարվել պաշտոնից ու առաջնաշունչ, միայն թե չդառնա տիաճ գործարքների մասնակից: Արմային զուգընթաց՝ հեղինակը կերտում է նաեւ նրա զոհված հոր կերպարը: Հայրը դարձյալ անցյալի ծայրն է, որն իր բացակա ներկայությամբ մի կողմից կարծես մասնակցում է վիպական գործողություններին, մյուս կողմից՝ իր գրառումներից ածանցված խորհուրդներով դաստիարակում որդուն: Հայրը որդու ներքին խորհրդատուն է: Մոտավոր մեծությանը կրկնվում է «Ձորի Միտոն»: Հայրերը շարունակվում են որդիների մեջ՝ շարունակելով կյանքի ճանապարհը:

Բնական մրբերանգնեցող է ներկայացված նաեւ Արմայի ու Նազիկի սիրո պատմությունը: Բնական՝ նաեւ նպատակին չհասած Նազիկի վրեժի եւ ատելության պահին. մի կողմից՝ ուրիշի հետ ամուսնացած կնոջ դեռեւ չմարած սեր, մյուս կողմից՝ չարություն ու զայրույթ, մի կողմից՝ կարոտակեզ համբույր, մյուս կողմից՝ հույսերի խորտակում: Այդպես նրանք միասին ժամանակին տնկեցին խաղողի վազ, միասին էլ թաղեցին:

Ժամանակի կյանքի բնութագրական կերպար է Արտուշը՝ իրոք որ կատարյալ ավարա: Անկազմակերպ, կյանքում իր տեղը չգտած մարդ է նա: Լքել է ընտանիքը, ծանծաղում է նաեւ հաջորդ կնոջից, հարբեցող է ու մի ճանապարհ ունի՝ դեպի Ռուսաստան, դեպի խոպան: Պատերազմի մասնակից լինել էլ չի հերոսացնում նրան, քանի որ պատերազմի դաշտում էլ նույնն է եղել: Անգամ այս կտրվածքով ներկայացնելով իր հերոսին՝ հեղինակը չափից ալելի չի կուտակում բացասական հատկանիշներ,

ամեն ինչ չի ծայրահեղացնում: Վեպի վերջում Արտուշն սկսում է զգալ իր հասունացած երեխաների կարոտը եւ նույնիսկ այսպիսի դատողություն անում՝ միմեզնե հիմա երեխաներին պետք է եղել հացի համար, իսկ հիմա ավելի կարեւոր բաներ կան:

Վեպում իրենց տեղն ունեն նաեւ մյուս կերպարները. Երեմն ու Վարոսը՝ իրենց շահասիրությամբ, Եղիա Կիրակոսյանը՝ իր չոր, գործնական աշխատանքային առօրյայով, բրիգադիր Մարուխյանը՝ քմամքով ու հաճկատարությամբ, գյուղատնտես Վիրաբ Բադալյանը՝ թեւ խեղճ, բայց ինքն իրեն պարտադրող նկարագրով: Հեղինակի բնութագրումները դիպուկ են անգամ թուցիկ կերպարներ ներկայացնելիս (քաղաքից եկած պրոֆեսորները, դոցենտը, սպիտակամորթ ու գեղեցիկ ասպիրանտը):

Ահա այս ամենով էլ համադրվում-ստեղծվում է վեպը՝ իմաստային հեռակետ ունենալով աշխատանքային առօրյան:

Բոլոր արժանիքներով հանդերձ՝ «Բովտուն»-ը դեռեւս գեղարվեստական այն նվաճումը չէր, ինչի ձգտում էր հեղինակը: Նյութը իրենն էր, տարիներ շարունակ կուտակել էր ակնարկներում, պատկերածն իր աչքի տեսածն էր, բայց խոսքի կիզակետը չէր գտնվել: Լայն ընդգրկումը տարրալուծել էր ամեն ինչ, եւ այն նվիրական ու թանկը,



որի համար գրիչ էր վերցրել, չէր դարձել առանցք, ձուլվել-խառնվել էր ընդհանուր պատկերներին: Բայցեւ «Բովտուն»-ը գրելիս Գալշոյանն իր հերոսների հետ մեկտեղ բովվեց: Ուստիեւ որոնումը պետք էր շարունակել վերջնականապես ճշգրտելու ասելիքի ուղղվածությունը: Պատահական չէ, որ «Բովտուն»-ից հետո գրողը բավականին ժամանակ լռեց: Համդարտ երկունքով ծնվում էր նոր գիրքը, որից առանձին պատմվածքներ լույս էին տեսնում գրական մամուլի էջերում եւ ընթերցողին նախապատրաստում նոր հանդիպման:

Մինչ «Մարութա սարի ամպերը» ժողովածուն Գալշոյանը պատմվածքների մի շարք գրեց Կոմիտասի կյանքից եւ «Ծիրանի ծառ» խորագրով ի մի բերեց «Ծաղկած քարեր» գրքում:

→ էջ 5, 8

Զարեհ Որբունու պատմվածքները



Սկիզբը՝ թիվ 8

Ժամանակի քննությունը փիլիսոփայական հանգրվան ստացավ Զարեհ Որբունու ստեղծագործական կիզակետերում, ընդ որում՝ մի ամբողջ հիսնամյակ՝ «Փորձից» մինչեւ «Թեկնածու», «Թեկնածուից» մինչեւ «Ասֆալտ» եւ դրանից հետո գրված ստեղծագործություններում: Որբունին այն կարծիքին էր, թե բանաստեղծի փիլիսոփայական հաճումն ավելի առարկայական է,

մինչդեռ վիպասանինը՝ «անբնական գտնողներ կ'ըլլան»: Դա գալիս է նրանից, որ գրողը ազգային կամ գաղափարական «գետինը» տալիս է իբրեւ հետեւանք, իբրեւ զսպաշապիկ: Խոր է նրա հակումը դեպի ենթագիտակցականի ոլորտը, անգիտակիցը, ուր տեսնում է «անդադրում խորհրդավոր երթելակներ», որոնց տրվում են իր ներքնասույզ հերոսները:

Գրողի վերաբերմունքը վիպական ներքին զարգացման թելերն իր բռն մեջ պահելու, խաղարկելու կարողության մեջ է: Պատահական չէ, որ նա այդ շնորհը «խաղ» է կոչում: Իսկ բոլոր խաղերը զարգացնում ու հարստացնում են երեւակայությունը: Արվեստի պարագայում խաղը նաեւ ազնվացնում է: Խաղը հակադրվում է պատմությանը, սյուժետային ճյուղավորումներին: Խաղը փիլիսոփայական մտորումի հանգեցնող ուղիղ ճանապարհն է: Այս եւ նման այլ հարցադրումներով Զ. Որբունին երեւան է հանում իր սուր հետաքրքրությունը բերգոտական փիլիսոփայական,

մեղմ ասած, տրամադրության վերաբերյալ: 20-ական թթ. վերջին երեսույթն ինքնին հետաքրքիր էր: Սա փորձ է ոչ միայն հերոսի՝ դրսի աշխարհում ապրելու հնարավորությունների առումով, այլ նաեւ իր՝ Զ. Որբունու փորձն է հայկական ազգային գրական ավանդույթի դիմաց բերելու նորագույն փիլիսոփայության նկատմամբ անսքող հետաքրքրություն: Ընդ որում՝ բերգոտական հայացքի ծավալումն իր ստեղծագործու-

թյուններում չի սահմանափակվել միայն «Փորձով»: Այն խորանում է հաջորդ տասնամյակներում գրված «Թեկնածու», «Ասֆալտ», «Սովորական օր մը» վեպերում: Նշենք նաեւ, որ Ա. Բերգոտին ինտուիտիվ-վիզմի՝ ներքնատեսության մի շարք նոր մեկնություններ Զ. Որբունուց հետո հայ գրականության մեջ տվել է բանաստեղծ Զարեհ Խրախունին: Հարկ է նկատել, որ վերջինիս ազատության, կամքի, հեզմանքի եւ ներքնատեսության փիլիսոփայական որակական այլ մեկնակետեր Զ. Որբունին պարզապես շրջանցել է, մինչդեռ պոլսահայ բանաստեղծի գրչով նրանք դարձել են ստեղծագործական թիրախներ:

Ուշագրավ է այս առումով «Ասֆալտը» վեպը, որը 70-ական թթ. սկզբին շարունակում է ժամանակի որոնումը հայ գրականության մեջ: Հերոսուհին՝ Նիկոլը, ի վերջո անցյալ է դառնում ժամանակի մեջ «ոչնչացման» ճանապարհով: Նիկոլն ասֆալտ փռողների, հայեցող հերոսի աչքի առջեւ դառնում է պարզապես սալահատակի ընդերքն անցնող, վերացող անձնավորություն: Ընդ որում՝ բերգոտական հեղինակը բաց է թողնում վերլուծության պատուհանները: Ինչ է ուզում ասել մեկնական հարցադրումը. ընթերցողն ազատ է մեկնաբանելու հարցում: Մի կողմից՝ ասֆալտը կլանի քաղաքակրթությունն է՝ ճիշտ եւ ճիշտ Զ. Խրախունու «Անձրեւ» ծրագրային ստեղծագործության պես, մյուս կողմից՝ նոր ժամանակներում հայ մարդու կեցության համար «փռուած» անիմաստ ճանապարհ:

Որբունին իր ստեղծագործություններով որոշակի ավանդ է բերել սփյուռքահայ գրականության մեջ հատկանշվող «նահանգի» ուղղությամբ: Ինչպես ինքն է նկատում, «...հոս կը շեշտեն, որ եղալ Սփիւռքի

հայ գրողներու մեջ առաջին համայնավարը: 1924-ին արձանագրուած եւ արտաքսուած, այսինքն՝ դուրս նետուած 1937-ին: Հոս ձեր կողմին պէս չէ, հող ներս կը նետեն, հոս՝ դուրս: Ահա թե ինչպէս բախտը չունեցայ քեզի ընկերանալու Գողգոթայի ճամբուդ վրայ՝ դուրս նայած ըլլալու միւս Գողգոթան՝ իբրեւ քեզի ընկեր: Հիմա միայն մէկ երազ ունիմ: Մարծունի գապիմն ունիմք: Լաւ ենք, բայց չեն կրնար գրել: Կ'երազեն վերադառնալ այն վերջին արհեստիս, որ ինծի թոյլ տուաւ գրել «Եւ եղել մարդը» եւ «Թեկնածուն»: Այսինքն՝ գիշերապահուիւիմ՝ յանուն գրականութեան» (<http://linknagir.org/?p=6644>, Կենսագրական շաղակրատութիւն Գ. Մահարիի հետ):

Որբունին «Հալածվածները» խորագրով չորս հատորով ծրագրված վեպի առաջին հատորը՝ «Փորձը» վերնագրով, լույս է ընծայել 1929 թվականին: Հետագայում լույս են տեսել նաեւ մյուս երեք հատորները: Գրողը հրատարակել է նաեւ պատմվածքների ժողովածուներ՝ «Վարձու սենյակ» (1939), «Անձրեւտ օրեր» (1958), «Պատմվածքներ» (1966): Առանձին գրքով 1947 թ. լույս է ընծայել «Դեպի երկիր» հայրենական հուշերի գիրքը, 1964 թ.՝ «Եվ եղել մարդ» վեպը:

Զարեհ Որբունին հոգեբանական նրբերանգներով մարդու ներքին ապրումներն ու տրամադրությունները պատկերող արվեստագետ է: Ունի ուրույն գրելաոճ: Գրողը կարողանում է մարդու ներքին ապրումների խոր նկարագրումով հոգեբանական լայն ընդհանրացումներ կատարել, ինչպես «Հանուն տառապանքին», «Մեմություն», «Գինովը», «Սեւ մազերը», «Տիտղոսի արծառը», «Անձրեւտ օրեր», «Մարդը, որ անցյալ չունի» եւ այլ պատմվածքներում:


→ էջ 6, 8

Դոկտոր Գեորգ Աբգարյանը եւ Նրա հայրենական գերդաստանը

«Վաղընց, շատ վաղուց Արագածոտն աշխարհում Յացն անունով գյուղ է եղել: Յետո եկել են հոռոմները, այստեղ հիմնել իրենց գորակայանն ու գյուղն անվանել իրենց անունով՝ Յոռոմ: Ու էլի, երբ գլորվել են տարիներ ու դարեր, մի իմաստուն դերվիշ՝ Նիկոլայ Մառը, փորել-փորփորել է ամրոց-քաղաքի ու միջնաբերդի շրջակայքը, հայտնաբերել ցորենի ու գարու քարակոփ ամբարներ: «Յացի շտեմարան է եղել այս գյուղը»,— ասել է Մառը: ...Կարս գետի մերձափնյա հովիտներից սկսվող Շիրակի դաշտավայրը գալիս, եզերվում է այստեղ: Եղել է, կա ու պիտի լինի անտիկ աշխարհից եկած Յոռոմը» (Աբգարյան Գեորգի Յոռոմը, Սենամարտ թշնամու խրատատում, Եր., 1989, էջ 293): Բազմադարյան Յոռոմոսի կամ Յոռոմոց վանքի մասին հիշատակություն է թողել XIII դարի հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին (Կիրակոս Գանձակեցի. Պատմություն Յայոց, աշխատությանը 4. Ա. Մելիք-Օհանջանյանի, Եր., 1967, էջ 84, 85, 310): Սակայն պետք է նշեն, որ դրանից շատ ավելի վաղ VII դարի պատմիչ Սեբեոսի Պատմության մեջ պահպանվել է մի վկայություն (գլ. ԼԲ). «Եւ [Յոյնք] առեալ զառ եւ զաւար զբանակին Պարսից՝ դարձան ի բանակետոյն իրեանց, որ կայ ի վերայ գետեզերն, որ կոչի Յոռոմոց մարգ» (Պատմություն Սեբեոսի. աշխատասիրությանը Գ. Վ. Աբգարյանի, Եր., 1979,

էջ 108): Շարունակության մեջ (12 տող ներքեւ) հիշատակվող Երզնայի (=Արգինայի) բերդը հաստատում է, որ Յոռոմոց մարգ գետափնյա վայրը նույնպես գտնվել է Շիրակի դաշտում: 603 թվականի պատերազմի ժամանակ այստեղ գտնվել է Ռոմանիայի (Բյուզանդական) Փոկաս կայսեր հեծելազորի գետափնյա կայանատեղին (խոտավետ մարգ): Գետը մի կողմից պատսպարում էր եւ միաժամանակ ջուր ապահովում մարդկանց եւ ձիերի համար: Խորհրդային Յայաստանի Արթիկի շրջանի Յոռոմ գյուղում բնակվող Աբգարյանների ընտանիքի համար հայ-գերմանական առնչությունները յուրովի սկիզբ ունեցան: 1941 թվի հունիսի 22-ի կիրակնօրյա լուսաբացին հիտլերյան Գերմանիայի անակնկալ հարձակումով սկսվեց Յայրենական պատերազմը: Այդ ընտանիքն իրար հետեւից գերմանական ռազմաճակատ ուղարկեց վեց եղբայրների: Եղբայրներից ավագը՝ կամավոր մեկնած գիտության թեկնածու Արամայիսը (ծնվ. 1906 թ.), 1941 թ. դեկտեմբերից սովորել է ավարտել է Բաքվի ռազմական ուսումնարանը եւ ուղարկվել ռազմաճակատ՝ որպես վաշտի քաղդել: Արամայիսը զոհվեց 1942 թվի մայիսին Կերչում՝ թշնամու գերակշռող ուժերի դեմ մղված անհավասար ճակատամարտում (Փայլակ Ենգոյան. Երեւանի համալսարանը Մեծ

հայրենականի տարիներին, Եր., 1975, էջ 38–39) հարյուրավոր հայ ռազմիկների հետ: Յաջորդ գոհը եղավ Արամայիսի կրտսեր եղբայրը՝ դերասան Արտավազը (ծնվ. 1918 թ.)՝ նույնպես Կերչում 1942 թվին: Եղբոր՝ դերասան Արտավազը Աբգարյանի մասին Գեորգ Աբգարյանը պատմում է. «Արտոն ծնվել է 1918-ի սեպտեմբերի 12-ին: 1926–1938 թթ. սովորել է մեր գյուղի դպրոցում՝ ակնհայտ ընդունակություններ ցուցաբերելով երգից, նկարչությունից եւ ասմունքից: Արտոյի ամենասիրած ուսուցիչը եղել է 17-ամյա Խաչիկ Դաշտենցը (Տոնոյան), որը եւ խրախուսել է նրան ընդունվելու դերասանական ստուդիա» (Սասուն Գրիգորյան. «Մուսաները չլռեցին», 1989, էջ 234: Սասուն Գրիգորյանը 1996 թ. հիմնել է Մեծ եղեռնի եւ Յայոց ազատամարտի «Ուխտատուն» թանգարան-ինստիտուտը, որտեղ գիտականորեն ուսումնասիրվում, հրատարակության են պատրաստվում Մեծ եղեռնի, ստալինյան բռնությունների, Մեծ հայրենական եւ աֆղանական պատերազմների, Յայաստանի եւ Արցախի ինքնա-



պաշտպանության ժամանակ զոհված, անհայտ կորած, գերված ոչ միայն գիտության, գրականության, մշակույթի, ռազմարվեստի, հասարակական-քաղաքական, պետական գործիչների, այլեւ շարքային զինվորների մասին փաստավավերագրական նյութեր: Անձամբ ճանաչում էի Սասունին. ոգու մեծ կորույթի տեր մարդ էր: Շրջում էր Խորհրդային Միության Յայրենական պատերազմի եւ ստալինյան տեռորի զոհերի գերեզմանոցներում՝ ըստ հնարավորին վավերական տեղեկություններ հավաքելու համար:

→ էջ 6

1918 թ. մայիսյան հերոսամարտեր. հայ ժողովրդի Յայրենական մեծ ռաշեռագը եւ միասնական ոգու հրաշակեռ հաղթանակը

← էջ 2
Երրորդ զորախումբը (Կովկասյան 9-րդ հետեւակային դիվիզիա) հարձակման ուղղություն էր վերցրել Ալեքսանդրապոլից դեպի Բաշ Ապարան՝ հրաման ունենալով հյուսիսից պատնեշել Երեւանը, իսկ հարկ եղած դեպքում՝ նաեւ շարժվել Յամանլու-Ղարաքիլիսա ուղղությամբ: Չորրորդ զորախումբը (Կովկասյան 36-րդ հետեւակային դիվիզիա) պետք


բական ամբողջական զորախմբերը, թույլ չտվեցին թուրքական զորախմբերին կենտրոնացված, հուժկու հարված հասցնելու հայկական խոշոր դիմադրական կենտրոններին: Այդ փոքրամասշտաբ դիմադրական շրջաններն ապահովեցին հայոց դիմադրական շրջային անբախտելիությունը եւ նպաստեցին ավելի խոշոր ճակատամարտերում հայերի տարած հաղթանակներին: Արեւելյան Յայաստանում թուրքական

մոտ մարտի բռնվեց թուրքերի ու քրդերի հետ: Թշնամին չդիմացավ եւ նահանջեց դեպի Ախուրյանի վտակ Ղալիչայի (Աշոց գետի օժանդակ Ղազանչի) աջ ափը: Կարսի մարզը զավթած թուրքական զորքերն ապրիլի 16-ին հասան Ախուրյանի ափը: Թուրքական մի զորաջոկատ էլ հասավ Աշոցը Ջավախքին միացնող ճամապարհին: Չունենալով անհրաժեշտ պաշարներ եւ չստանալով Յայոց ազգային ու Ապահովության խորհուրդների աջակցությունը եւ ունենալով գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանը՝ զորավար Անդրանիկը Քարախաչի լեռնանցքով նահանջեց դեպի Կորնցովկա: Թուրքական զորքերն անարգել շարժվեցին դեպի Աշոցը եւ Ջավախք: Ախալքալաքի գավառի հայկական ջոկատները դիմադրություն կազմակերպեցին: Յատկապես համառ մարտեր տեղի ունեցան Սաթիա գյուղի մատույցներում: Թուրքական կովկասյան 5-րդ դիվիզիայի զորամասերը, որոնց Թիֆլիս արշավելու հրաման էր տրվել (Քարախաչի լեռնանցքով եւ Տաշիրի ու Բորչալուի վրայով), հանդիպելով Անդրանիկի զորախմբի հուժկու դիմադրությանը, փոխեցին ուղղությունը եւ որոշեցին Ջավախքի վրայով մտնել Թիֆլիս: Սակայն մայիսի 30-ին ու 31-ին նրանք հանդիպեցին շուրջ 500 սաթիագիների (թուրքերի արտահայտությամբ՝ «Ղայա տաշի» (ժայռ)) համառ դիմադրությանը: Մոտ 3000 բնակիչ ունեցող Սաթիա գյուղի թեւ տղամարդիկ, թեւ կանայք երդվել էին կռվել մինչեւ վերջ: Երկու օրվա ընթացքում թուրքերն այնքան շատ կորուստներ կրեցին Սաթիայի մատույցներում, որ այլեւս ի վիճակի չէին արշավելու Թիֆլիս: Յայկական ուժերն ապահովեցին Ախալքալաքի գավառի բնակչության տեղափոխումը հարեւան շրջաններ: Ջավախահայերից կազմավորված ջոկատները Ջավախք ներխուժած թուրքերին 1918 թ. մայիսի 16-ի լույս 17-ի գիշերը Կարծախ գյուղի մոտ կարողացան կարճատեւ դիմադրություն ցույց տալ: Մայիսի 13–18-ը Բուղդաշենի (Գորելովկա) սարերում եւ Մեծ Խանչալիի շրջանում մղված մարտերում թուրքերը պարտվեցին: Յաղթանակի գործում վճռական նշանակություն ունեցավ Քարախաչի լեռնանցքով զորավար Անդրանիկի կա-

տարած արագ զորաշարժը: Դիմադրական մարտերի շնորհիվ հնարավոր եղավ Ախալքալաքի հյուսիսային գյուղերի 40 000 բնակիչների տարահանել դեպի Բակուրիան, իսկ հարավային գյուղերից 30 000–35 000 մարդ տարահանվեց Ծալկա: 1918 թ. հունվարից թուրքերն ուժեղացրել էին Ախալքալաքի շրջափակումը՝ արգելք լինելով դեպի Բորժոմ, իսկ Ասպինձայի մոտ՝ դեպի Ախալքալաք տանող ճամապարհներին: Ախալքալաքի հայերն ու վրացիները դիմեցին ինքնապաշտպանության: Ընդհանուր հրամանատար գեներալ Գ. Արզեւանիձեմ Ախալքալաքի ազգային խորհրդի նախագահ Ջորի Ջորյանի (հայրը Գործն գավառի Ցոնա գյուղից էր, մայրը՝ Թիֆլիսից) եւ հայկական գումարտակի հրամանատար գնդապետ Չաուշովի աջակցությամբ իրականացրեց մի քանի դիմադրական մարտեր: Ծղալթբիլա գյուղի քաջորդիներն ապրիլի 27-ին գլխավոր ջախջախեցին իրենցից բազմապատիկ անգամ շատ Ջախսուի ենթաշրջանի թուրքական գյուղերի հրոսակներին: Յիշարժան է նաեւ Դիպակ սարի ճակատամարտը, իսկ մայիսի 3–4-ը՝ հայկական Ծուրուր եւ Ծիրա գյուղերի մոտ մղված մարտերը: Դիմադրական մարտերը շարունակվեցին մինչեւ հունիսի 6-ը, եւ թուրքերին այդպես էլ չհաջողվեց գրավել Ախալքալաք: Յայերը հուժկու հակահարված հասցրին թուրքերին նաեւ Տամալայում (Դամալա), որը գտնվում է Ախալքալաքի եւ Ախալքալաքի միջեւ ու անտառամիջյան ուղիներով կապված էր Ախալքալաքի հետ, որտեղից էլ ռազմական օգնություն էր ստանում: Տամալան ռազմավարական կարեւոր հանգույց էր: Տեղի բնակչության դիմադրությունը թշնամու համար անսպասելի էր: Տամալայի ինքնապաշտպանության դեկավարը Մարտիրոս (Մատո) Սահակյանն էր: 1918 թ. հունվար–ապրիլ ամիսներին արյունահեղ կռիվներ մղվեցին գյուղի մատույցներում: Այս հերոսամարտն զգալիորեն թուլացրեց թուրքերի հարձակման թափը եւ նպաստեց Ախալքալաքի ինքնապաշտպանության կազմակերպմանը:

Շարունակելի

Արման ՄԱՆՈՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու



է հարձակվել Ալեքսանդրապոլ–Սարդարապատ–Երեւան երկաթգծի (Անի–Սարդարապատ–Էջմիածին–Երեւան) ուղղությամբ: Յարձակում էր նախապատրաստվել նաեւ Արդահան–Ախալքալաք–Ախալքալաք ուղղությամբ: Այսպիսով՝ թուրքական բազմազուլս վիշապ-հիդրայի հարձակման գիծը ձգվում էր Ախալքալաքից մինչեւ Երեւան, ու այդ գծի վրա գտնվող յուրաքանչյուր դիմադրող բնակավայր, հենակետ կամ ճակատամարտի օջախ անգնահատելի նշանակություն ունեցան հայոց դիմադրական ոսկե շրջային ամրությունն ու կենսունակությունը, մարտնչող ոգին ամբեկանելի, անխորտակ դարձնելու գործում: Նրանք, թեկուզեւ կարճ ժամանակով, կարողացան իրենց վրա բեւեռել թուրքական հիդրայի մի-մի գլուխ՝ այդպիսով մասնատելով ու ջլատելով թուր-

գորքերի հետ առաջին ընդհարումները եւ դիմադրական մարտերը տեղի ունեցան Ջավախքում եւ Շիրակում: Ախալքալաքի քաղաքագլուխ Մկրտիչ Մարգարյանի ջլատվորած ազգային խորհրդի աջակցությամբ եւ Կովկասյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար Ե. Լեբեդինսկու հրամանով կազմակերպվեցին գավառի պաշտպանության ժամանակավոր կոմիտե եւ հրաձգային գունդ: 1918 թ. ապրիլի 10-ին ազգային հերոս Անդրանիկ Օզանյանի հրամանատարությամբ գործող առանձին հարվածող զորամասը շարժվեց դեպի Շիրակի հյուսիս, հասավ Գյուրջիյոլ (այժմ Թորոս) գյուղը եւ դիրքեր գրավեց Աշոցը Լոռու միացնող ռազմավարական նշանակությամբ ճամապարհի սկզբնամասում՝ Քարախաչի լեռնանցքի մուտքի մոտ: Ապրիլի 14-ին զորամասը Ղազանչի գյուղի

ՄՈՒՇԵՂ ԳԱԼՉՈՅԱՆ



← էջ 3

Դրանք առանձին դրվագներ են Կոմիտասի որբանոցային, ճեմարանային, ստեղծագործական կյանքից: Պատմվածքները շաղախված են առանձին երգերի մոտիվներով: «Երգը ժողովրդի պատմությունն է»,— Կոմիտասի խոսքն է «Դարուղի» պատմվածքում: Երգը՝ որպես ժողովրդի պատմություն, եւ Կոմիտասի կյանքը՝ որպես ժողովրդի պատմության խորհրդանշան. ահա այս խտացումն է պատմվածաշարի ենթամաստը՝ շատ բնութագրական Գալչոյանի ստեղծագործական հակումներին: Անհարկի չէ մտաբերել, որ Կոմիտասի կերպարն այս սկզբունքով պատկերել են մաեւ Պ. Սեւակը՝ «Անլույսի զանգակատուն» պոեմում, Ռ. Արամյանը՝ կոմիտասյան շարքի պատմվածքներում, մաեւ ուրիշներ: Ժողովուրդ եւ անհատ, հայրենիք եւ ճա-

կատագիր միասնությունը՝ որպես մարդ-հայրենիքի հայտնաբերման հնարավորություն, ավելի բացահայտորեն արտահայտվեց «Մարութա սարի ամպերը» գրքում՝ ասպարեզ հանելով ժողովրդի XX դարի պատմությունը իրենց կենսագրությանը իմաստավորող բազմաթիվ հերոսների:

«Մարութա սարի ամպերը» ժողովածուն դարձավ հեղինակի ստեղծագործական հաղթանակը, որոնումների համրագումարը: Այստեղ անտրոհեղիություն աստիճանի միասնական են եւ նյութը, եւ լեզուն, եւ պատումը: Իր հերոսներին միավորված, նրանց ոգեղեն շնչին միաձուլված կերպար դարձավ

մաեւ ինքը՝ հեղինակը, որն իր անմիջական ներկայությունը ինչքան էլ ջանացել է անտեսանելի դարձնել, բայց երեւում է, որովհետեւ չէր կարող սրտի թառանջը զսպել: Այս ներքին միասնությունն էլ պայմանավորել է խոսքի կենդանի ու ներգործուն ուժը:

Ամբողջությամբ ժողովածուն միասնական վիպական մտածողության արգասիք է: Պատմվածքներն առանց անմիջական կապի, բայց իմաստային ու հոգեբանական անցումներով շարունակում ու լրացնում են միմյանց: Միեւնույն ճակատում, միեւնույն թշնամու դեմ կռվող զինվորների կյանքն է դա՝ դրված երիտասարդ տարիների ու կյանքի մայրամուտի մթաթերթին:

Գիրքը բացող «Ես հին ու մոր օրեր» մուտքը, ըստ կառուցվածքային մշակա-

կության, ունի մախաբան-մախերգանքի բնույթ: Գերդաստանը հավաքվել է շնորհավորելու տան գլխավորի, հենց իր՝ Մուշեղ Գալչոյանի հոր Նոր տարին: Բայց տան հայրն ու պապը կորցրել է ժամանակի համարանքը, կորցրել է տեղի զգացողությունը: Նրա խոսքն այս է՝ ուղղված որդուն. «Մուշեղ, ես գարնան Ծովասարի արտերն իմացանեմ: Գարից ցանեմք, թե՛ գլխի»: Յետո. «Մուշեղ, երեկ չէ՞ մեր խոփ ջարդավ: Մենք Գալչոյ Մանուկի տղեքն եղինք ու մեր գութան կանգնի: Դա՛: Մեր գութան կանգնի: Ես գիշեր թե բաբոն սարից իջնի, ի՞նչ պատասխան կտաս»: Թոռներն աղմկելով պապին հետ են բերում իր կյանքի հեռավոր ժամանակներից եւ ասում՝ 1975 թիվն է, Նոր տարի է, ի՞նչ գութան, ի՞նչ խոփ: «Հայլե՛ն...» Յետո. հեռվից, Ծովասարի փեշի իր արտերից դարձավ, ետ եկավ հայրս: Ես հին ու մոր օրեր... Ես մամռոտ օրեր»:

Սկիզբը, ինչպես որ կա, այդպես էլ շարունակվում է մյուս հերոսների մեջ: Այսինքն՝ մոր ժամանակներ են, բայց գրքի հերոս դարձած սերնդի ներկայացուցիչներից յուրաքանչյուրի ուշքն ու միտքը անցյալի հետ է, ուր նրանց մանկության, պատանեկության եւ հերոսական ընդդիմության տարիներն են: Այսպես ժամանակները տարալուծվում են մաեւ հեղինակի էության մեջ, եւ մա էլ, միանալով իր հերոսների կյանքին, գնում է նրանց անցյալ ու ներկա օրերին ընդառաջ:

Նախամուտքին հաջորդում է «Կանչը» պատմվածքը: Յեռավոր տարիների սիրո կանչն է դա՝ ժամանակի գալարափողերի միջով ուղղված այն օրերին, երբ երագի մեջ մարմինը փափուկ ու անկշիռ թռչում է հայրենի դաշտերում: Օր ծերության հասած լեռնցի Ջորոն օրերից մի օր դաշտա-

վայրի գյուղերում հանդիպում է իր առաջին սիրուն, որը հիմա իր պես՝ տարիքն առած, մեծ գերդաստանի մայր է: Բայց նրա հոգին թունդ է ելնում, եւ ծուռ սասունցին, «Ալե՛ն... Ալե, իմ հոգին, Ալե՛ն...» կանչելով, ընկնում է սար ու ձոր, պատեպատ է տալիս իրեն, որ ճար գտնի իր սիրո կողքին լինելու համար:

Բանջար հավաքող կրակի կտոր աղջկան մա տեսել ու աչքը վրան էր գցել հիսունհինգ տարի առաջ: Հիսունհինգ տարի առաջ մի առավոտ Ջորոն գտավ իր «պստիկ Ալենին, որովհետեւ պետք է կորցնեք»: Եվ հիմա, կես դարից ավելի պահված թունդ զինու պես, կարոտի թանձր մի ծուխ դուրս է գալիս նրա հոգուց: Յենց դա է գտնված հոգեբանական պահը, վիճակի պոեզիան, ինչն էլ բացվում ու ծավալվում է մոր ալիքներով: Մնացածն այդ պահի գյուտի լրացումն է, բացատրությունը, որ բարեհաջող տեղ է հասցնում պատմողը:

Այս պահին էլ են մոռացվում տարիք, ժամանակ ու տարածություն, որովհետեւ ամեն ինչ անցնում է՝ բացի կյանքին իմաստ տված ամանց կարոտից:

Մյուս պատմվածքում («Քեռի Թորոսը») պահի մեկ այլ գյուտ է: Թշնամու դեմ ամբողջ կյանքում կռիվ տալով, մախ՝ ակն ընդ ական վառվող ածուխը ափերի մեջ թուրք ոստիկանին «հրամցնելով», հետո՝ մտովի Թորոսը հասնում է այն զգացողության, որ հակառակորդը՝ Մեհմետ էֆենդին, կարիճի կեռ ճիրամներով դարձել է բաղցկեղ ու խրվել իր կոկորդը: Սա Թորոսի համար դառնում է սեւեռուն գաղափար: Միակ փրկությունը կարճկոթ դանակը կոկորդը խրելն է: «Չէ, էլ քեզ փրկում չկա», «Էլ իմ ձեռքից չես պոճնի»,— ասում է մա եւ ցուցամատը ոխով տանում դեպի կոկորդը:

→ էջ 8

ՍԵՐԳԵՅ ՇԵՐՎԻՆՍԿԻՆ հայ գրականության թարգմանիչ

Յուրաքանչյուր մարդու սրտում առանձնահատուկ տեղ ունի սեփական երկիրը՝ իր հայրենիքը:

Երբ առաջին անգամ քարտեզի վրա փնտրում էի իմ հայրենիքը՝ Հայաստանը, դժվարությամբ գտա: Մեծ տարածքներ ունեցող հզոր պետությունները փառահեղ բազմել էին կողք կողքի, եւ նրանց միջեւ՝ մի փոքրիկ երկիր: Սակայն մեր փոքրիկ երկիրն ունի հազարամյա մեծ պատմություն: Եհիտ է՝ դարերի ընթացքում Հայաստանն արյան հեղեղներով լի ճանապարհ է անցել եւ հազար ու մի թշնամի տեսել, բայց այնուամենայնիվ բազում երկրներ վերացան աշխարհի երեսից, իսկ Հայաստանը մնաց: Կանգուն մնացին լեռներն ու քարերը, որոնք լուռ պատմում են զարմանալի պատմություններ ու արժանանում ոչ միայն իրենց հայրենակիցների, այլեւ օտարազգիների ուշադրությանը: Աշխարհի այս զարմանահրաշ անկյունն ասես մագնիսի պես դեպի իրեն է ձգում երկրագնդի տարբեր կողմերում գտնվող մարդկանց: Լինելով առասպելական մի երկիր՝ Հայաստանը գրավել է մաեւ բազմաթիվ արվեստագետների սրտեր: Ոչ միայն հայ, այլեւ օտարազգի նկարիչներ, երգահաններ ու բանաստեղծներ այս կամ այն չափով անդրադարձել են իրենց համար օտար եւ միեւնույն ժամանակ այդքան հարազատ երկրին: Բազում հնչյուններ են հյուսվել, որպեսզի արտահայտեն հայ լեռների ու այնտեղ ապրող ժողովրդի ուրախությունն ու վիշտը: Բազում գույներ են օգտագործվել, որ ներկայացնեն զարմանահրաշ երկրի բնությունն ու ճարտարապետությունը՝ առավելապես եկեղե-

ցիները: Եվ ի վերջո բազում էջեր են գրվել, որ պատմեն ամեն մի քարի բնավորությունն ու պատմությունը:

Շատ շատերը, մեկ անգամ այցելելով Հայաստան, մտովի այստեղ են մնացել հավերժ: Այս առումով բացառություն չէ մաեւ ռուս բանաստեղծ, թարգմանիչ ու գրականագետ Սերգեյ Շերվինսկին: Վերջինս ոչ միայն բանաստեղծություններ է ձուլել մեր երկրին, այլեւ կատարել է մի շարք թարգմանություններ հայ գրականությունից եւ գրել է հոդվածներ՝ նվիրված Հայաստանին ու նրա մշակույթին: Սակայն պետք է նշել, որ հայ ընթերցողը գրեթե ծանոթ չէ Սերգեյ Շերվինսկու գրական գործունեությանը, եւ այդ պատճառով հարկ ենք համարել նախաառաջ անդրադառնալ նրա կենսագրությանը:

Սերգեյ Շերվինսկին ծնվել է 1892 թվականին Մոսկվայում՝ ճանաչված բժիշկ Վասիլի Դմիտրևիչ Շերվինսկու բազմազավակ ընտանիքում: Ընտանիքի հայրը լայն աշխարհայացքի տեր անձնավորություն էր, ով մեծ տեղ էր հատկացնում կրթությանը: Առհասարակ, Շերվինսկիների ընտանեկան միջավայրը նպաստում էր երեխաների մտավոր զարգացմանը, եւ այդ մասին է վկայում նրանց բազմակողմանի կրթությունը, որը ներառում էր օտար լեզուների, երաժշտության,



գեղանկարչության եւ գրականության ուսուցում: Այսինքն՝ շնորհիվ ընտանեկան դաստիարակության՝ Սերգեյ Շերվինսկու սրտում արդեն մանկուց ձեւավորվում էր սերը դեպի արվեստը: Շերվինսկիների ընտանիքը սիրում էր մաեւ ճամփորդել, եւ յուրաքանչյուր ճամփորդություն մի յուրովի ծանոթություն էր տվյալ երկրի պատմությանն ու մշակույթին: Այդպես, օրինակ, Իտալիա մեկնելուց առաջ երեխաները ծանոթանում էին տեղի հուշարձաններ-

մրցանակի՝ իր «Մոսկովյան Կրեմլի ճարտարապետությունը» աշխատության համար: Այդ մրցանակն էլ ավելի խրախուսեց պատանուն՝ շարունակելու իր քայլերն արվեստաբան դառնալու ճանապարհին: Ի վերջո նրա աշխատասիրությունն ու սերը դեպի արվեստը գնահատվեցին, եւ համալսարանն ավարտելուց հետո Շերվինսկին առաջարկ ստացավ մույն համալսարանում աշխատելու:

→ էջ 7, 8

ՄԿՐՏԻՉ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՐԱՊԵՐԱԿԱՆՈՒՄԸ

19-րդ դարի երկրորդ կեսում հայ ազգային-ազատագրական շարժումը շեշտակի վերելք ապրեց, եւ դա պայմանավորված էր ազգային կուսակցությունների կազմավորումով ու գործունեությամբ: Հայ անդրամիկ քաղաքական կուսակցությունը ձեւավորվեց Արեւմտահայաստանի բուն կենտրոնում՝ Վանում: Դա Արմենական կուսակցությունն էր, որի հիմնադիրն ու ղեկավարը Մկրտիչ Ավետիսյանն էր (Թերլեմեզյան):

Մ. Ավետիսյանը ծնվել է 1861 թ. Վանի Այգեստան թաղամասում: Նախնական կրթությունն ստանում է Հանկույսների թաղի ծխական դպրոցում: 1879 թ. ընդունվում է Արարատյան ընկերության հիմնադրած Վարժապետանոցը, որի տեսուչն էր Մ. Փորթուգալյանը: Մեկ տարի անց փոխադրվում է նորաբաց Կեդրոնական վարժարան, որտեղ ստանում է ազգային, հեղափոխական եւ հայրենասիրական ընտիր դաստիարակություն: Ուսումն ավարտելուց հետո նույն վարժարանում ուսուցչական պաշտոն է ստանում, միաժամանակ հիմնում է կիրակնօրյա վարժարան, ուր հաճախում են շուրջ 150 կիսագրագետ ու անգրագետ պատանի ու երիտասարդ: Վերոնշյալ կիրակնօրյա վարժարանը «եղաւ օրհնութիւն մը Այգեստանի ու Վանի արհեստավոր սերունդին համար՝ ստանալու տարրական գիտելիքներ, որոնց հետ միասին՝ բարեկրթութեան, ընկերասիրութեան եւ հայրենասիրութեան գաղափարներու եւ մանաւանդ՝ յեղափոխութեան եւ ազատութեան մասին դասընթացներ» (Յ. Վարդիվաշեան, *Մեծ երազի ճամբուն ուղեւորները եւ համապարփակ պատմութիւն Ռամկավար Ազատական կուսակցութեան, Ա հատոր, Արմենական կազմակերպութիւն, Հայ ժողովրդական կուսակցութիւն, Նիւ Երզնի, 2015 թ., էջ 71*):

Մ. Ավետիսյանի օրինակին հետեւում են նրա դասընկերներն ու համախոհները, որոնք լծվում են կրթական ու դաստիարակչական գործին Բիթլիսի (Բաղեշ) եւ Վանի տարբեր շրջաններում: Կարճ ժամանակում Մ. Ավետիսյանը դարձավ Վանի պատանիների եւ երիտասարդների պաշտելի կուռքը եւ, ինչու չէ, առաջնորդող դեմքը:

Վանից թուրքական իշխանությունների՝ հրիմյան Հայրիկին եւ Մ. Փորթուգալյանին աքսորելուց հետո Մկրտիչ Ավետիսյանի՝ ամեն ինչում ուղղորդող եւ ուղղություն ցույց տվող դերակատարությունն առավել ընդգծում եւ հստակ է դառնում:

1885 թ. աշնանը՝ 25 տարեկան հասակում, գաղափարակից ընկերների հետ հիմնադրում է հայ անդրամիկ քաղաքական կազմակերպությունը՝ Արմենական կուսակցությունը:

Լինելով քաղաքական կուսակցության ղեկավարը՝ Մ. Ավետիսյանը եռանդուն պայքար է սկսում Վանի հետադեմ, կղերական շրջանների դեմ, որոնք սերտ կապերի մեջ էին թուրքական իշխանությունների հետ: Ազգային եւ հակազգային հոսանքների միջեւ ընթացող պայքարը հայտնի է Պողոսյան եւ Ապողոսյան խմբավորումների պայքար անունով: Մ. Ավետիսյանը, բնականաբար, առաջադեմ Ապողոսյան խմբավորման հետ էր՝ նրա կարող ու հարվածող ուժերից մեկը:

Հրապարակախոսի իր գրիչը ծառայեցնում է պողոսյանների իսկական դեմքն ու էությունը բացահայտելու համար: Պոլսահայ մամուլում հրապարակած իր մի հոդվածը սաստիկ զրգռում ու զայրացնում է պողոսյաններին, որոնք դիմում են թուրքական իշխանությունների օգնությանը: Ավետիսյանը ձերբակալվում է, սակայն կարճ ժամանակ անց ազատվում եւ ստիպված հեռանում է Վանից (*նույն տեղում, էջ 72*):

Նա Վանից անցնում է Պարսկաստան եւ հանգրվանում Սալմաստի շրջանի գյուղերում: Այստեղ ամբողջ ծավալով տանում է մանկավարժական, դաստիարակչական ու քարոզչական բնույթի աշխատանք: Նրա եւ այլ արմենականների համառ ջանքերի շնորհիվ Սալմաստի տասներկու հայաբնակ գյուղում բացվում են ազգային դպրոցներ: Սալմաստի շրջանի հայության բոլոր հատվածների շրջանում նա ձեռք է բերում անբասիր հեղափոխականի եւ գաղափարական աներեր մարտիկի հեղինակություն: Նրա գործունեությամբ մի նոր էջ է բացվում սալմաստահայության մտավոր եւ մշակութային կյանքում:

Սալմաստից Մ. Ավետիսյանն անցնում է Կովկաս, որոշ ժամանակ անց՝ 1888 թ., դարձյալ ժամանում է Կ. Պոլիս եւ ծավալում ազգային-հեղափոխական գործունեություն:

Մ. Ավետիսյանը՝ որպես ազգային, կուսակցական, հեղափոխական գործիչ եւ որպես հրապարակագիր, համազգային, համահայաստանյան ընդգրկումների տեր անհատ էր: Նրա համար չեզոք հարցեր ու չեզոք թեմաներ չկային: Նա ուշի-ուշիով հետեւում էր Հայաստանի բոլոր մասերում տեղի ունեցող դեպքերին եւ իրադարձություններին: Այդպես՝ նա հեղափոխական գործչի անվեհեր վճռականությամբ արձագանքեց Մշո դաշտի գյուղերում տեղի ունեցած ողբերգական իրադարձությանը՝ մանկահասակ գեղեցկուհի Գյուլիգարի առեւանգմանը քրդական խաժամուժի կողմից: Կատարվող բռնությունների դեմ նա խիստ դատապարտող հոդվածով հանդես եկավ «Արմենիա» պարբերականում: Այդ հրապարակման հետ համակարծիք ու համախորհուրդ էին Վանի հայ իսաարակության ազդեցիկ դեմքերից Կարապետ Նաթանյանը, բժիշկ Գալուստ Ասլանյանը եւ Գարեգին Իսագուլյանը: Սակայն նրանք «կը մատուցին հայ ոստիկանի մը կողմէ եւ Աւետիսեանի հետ կը բանտարկուին երկուրդի մէջ» (*նույն տեղում, էջ 72*):

Նաթանյանն ու Ասլանյանն ազատ են արձակվում, իսկ Ավետիսյանն ու Իսագուլյանն աքսորվում են Գյուլիսային Աֆրիկա:

Ավետիսյանն աքսորվում է Գյուլիսային Աֆրիկայում գտնվող Տրիպոլի քաղաքը (ներկայիս Լիբիայի մայրաքաղաքը): Սակայն այս արգելափակումը եւս երկար չի տևում: Օրերից մի օր, Միջերկրական ծովի ափին նկատելով շոգեմալը, նա իրեն ծովն է նետում, հասնում շոգեմալին եւ այսպես ազատվում սուլթանական աքսորից: Նրա այդ հանդուգն, խիզախ արարքով օգեշնչված բանաստեղծ եւ երգահան Քրիստափոր Թադևոսյանը հեղինակում է «Երբ ակելոծ ծովում վրայ» երգը, որը շատ շուտով ջերմ ժողովրդականություն է գտնում (*նույն տեղում*):

Ֆրանսիական շոգեմալը նրան հասց-



նում է Մարսել, որտեղ գտնվում էր իր շատ սիրելի, հոգեհարազատ ուսուցիչը՝ Մկրտիչ Փորթուգալյանը: Ավետիսյանի՝ Մարսելում հանգրվանելը վերաբերում է 1889 թվականին: Եթե առաջներում նա նյութեր ու հոդվածներ էր հրապարակում «Արմենիայում», ապա այժմ դառնում է պարբերականի աշխատակիցը: Փորթուգալյանը հնարավորության սահմաններում ամեն ինչով օժանդակում եւ զորակցում է նրան: Այդ շրջանում Փորթուգալյանի հետ համախորհուրդ՝ միասին են որոշում եւ ուրվագծում թերթի քաղաքական ուղղվածությունը: Մ. Ավետիսյանի դավանած քաղաքական համոզմունքների մասին կարելի է դատել այդ տարիներին «Արմենիայում» հրատարակած նրա ծրագրային հոդվածներից: Իսկ այդ կարգի ծրագրային հոդվածները համարվում էին ուղենշային եւ արտահայտում էին ոչ միայն հեղինակի, այլեւ «Արմենիայի» խմբագրակազմի դիրքորոշումները:

Շարունակելի

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Մերգեյ Շերվինսկին հայ գրականության թարգմանիչ



← էջ 5

Թվում էր, թե բոլոր երազանքներն ուր որ է կիրականանան, սակայն սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը, եւ երիտասարդի ծրագրերը խափանվեցին: Նա ընտրության առաջ կանգնեց. պատերազմյան տարիներին ուշադրությունը սեւեռել ոչ թե եվրոպական, այլ ռուսական արվեստի վրա, թե՛ առհասարակ փոխել հետաքրքրությունների ծիրը: Շերվինսկին ընտրեց երկրորդը՝ նախապատվությունը տալով գրականությանն ու գեղարվեստական թարգմանությանը: Պատճառն այն

էր, որ Շերվինսկու համար արվեստ հասկացությունն առավել լայն սահմաններ էր ընդգրկում, իսկ պատերազմի հետեւանքով այդ սահմաններն անցնելն անհնարին դարձավ: Այսպիսով արվեստի պատմությունը մղվեց հետին պլան, եւ առաջնահերթ դարձավ գրականությունը: Սակայն սխալ կլինի կարծել, որ գրականությունը Շերվինսկու կյանքում մինչ այդ երկրորդական տեղ է զբաղեցրել: Նա բանաստեղծություններ գրել սկսել էր դեռեւս 5 տարեկանից, իսկ արդեն 11 տարեկանում կատարել է իր առաջին թարգմանությունը Հայնրիխ Հայնեից: Գրականության հանդեպ հետաքրքրությունը վառ մնաց նաեւ հետագա տարիներին:

Իմանալով որդու տաղանդի մասին՝ Սերգեյի հայրը ներկայացրեց նրան Վալերի Բրյուսովին, որն այն տարիներին արդեն մեծ հեղինակություն էր վայելում թե՛ որպես բանաստեղծ եւ թե՛ որպես թարգմանիչ: Այդպես՝ 17 տարին դեռ նոր բոլորած Շերվինսկին առաջին անգամ հանդիպեց Բրյուսովին: Հետագայում նա պետք է ասեր. «Իմ կյանքում երկու ուսուցիչ եմ ունեցել՝ բարոյականության հարցում իմ հայրը, իսկ պոեզիայի մեջ՝ Վալերի Բրյուսովը» (*Շ. Шервинский, От знакомства к родству, Ереван, 1986, էջ 230, Շերվինս-*

կու հոդվածներից հաջորդ մեջբերումները նույնպես կատարվում են այս գրքից, եւ կնշվի միայն էջը): Սակայն խորհրդապաշտ բանաստեղծ լինելով՝ Բրյուսովը երբեք չէր ձգտում կաղապարել Շերվինսկու մտածողությունը կամ էլ նրան դարձնել իր հետեւորդը: Առաջնորդելով պատանուն բանաստեղծական խառնուղիներում եւ որոշակի ուղղումներ անելով նրա ստեղծագործություններում՝ Բրյուսովն ուղղակի ձգտում էր նորաթուխ բանաստեղծի սրտում սեր ու կիրք սերմանել պոեզիայի հանդեպ: Այնուամենայնիվ, Շերվինսկին եւս որդեգրեց խորհրդապաշտական մտածողության ձեւը: Արդեն 1920-ական թվականներին լույս տեսան նրա առաջին բանաստեղծական շարքերը՝ «Ֆեոդոսյան սոնետներ», «Բախչիսարայ», «Կովտեբելյան բանաստեղծություններ» եւ այլն: Բանաստեղծական կերտվածք ստացան նաեւ հեղինակի ճանապարհորդական հուշերը: Հետագա տարիներին լույս տեսան նաեւ «Բանաստեղծություններ՝ նվիրված Իտալիային» եւ «Տարբեր տարիների բանաստեղծություններ» ժողովածուները, իսկ արդեն հետմահու՝ 1997 թվականին, լույս տեսավ Շերվինսկու «Բանաստեղծություններ — Հուշեր» ժողովածուն: Շերվինսկին ունի նաեւ արձակ երկեր, եւ դեռեւս 1933 թվականին լույս տեսավ նրա «Օսթ-Ղնդկաստան» արկածային պատմավեպը,

որի գործողությունները տեղի են ունենում 17-րդ դարում՝ Հոլանդիայի եւ նրա գաղութների տարածքում: Այս վեպը եւս ճանաչում բերեց հեղինակին եւ նրա գրական ժառանգության արժեքավոր գործերից մեկն է:

Անդրադառնալով Շերվինսկու գրական գործունեությանը՝ հարկ է նշել, որ նրա գրչին են պատկանում նաեւ մի շարք գրականագիտական աշխատություններ, ինչպիսիք են՝ «Ռիթմ եւ իմաստ. Պոլիկինի պոետիկայի ուսուցմանը կից», «Թատրոնի շուրջ», «Արեւելքը Արեւմուտքում» եւ այլն: Այս գործերի միջոցով ծանոթանում ենք Շերվինսկի գրականագետին, որն ուսումնասիրելով անցյալի ու իր ժամանակի տեսակետները՝ ներկայացնում է սեփական կարծիքն այս կամ այն հարցի շուրջ:

Այնուամենայնիվ, ուշադրության է արժանի այն համաձայնքը, որ Սերգեյ Շերվինսկին ծանոթ է հանրությանը առավելապես որպես թարգմանիչ: Նա իր կյանքի ընթացքում բազմաթիվ արժեքավոր թարգմանություններ է կատարել, եւ այդ հարցում մեծ է նաեւ Վալերի Բրյուսովի վաստակը: Նա 20-րդ դարի սկզբին ծավալել էր թարգմանական լայն գործունեություն, եւ Շերվինսկին, իր հերթին, որպես Բրյուսովի աշակերտ եւ հետեւորդ, ներքաշված էր տարվող աշխատանքների մեջ:

→ էջ 8

